ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.01.02-42

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29.01.2021թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրեն Է. Գասպարյանի, ով գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրի շրջանակներում «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի միջին տարեկան 27 սովորողների (առանց ընդունելության) ուսուցումը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1 Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կազմում է մինչև 1 506 600 (մեկ միլիոն հինգ հարյուր վեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ :

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 20-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	Ք.Արարատ, Խանջյան 67
Կառավարական տուն 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչության
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 900428000435
Հ/Հ 900011034114	Տնօրեն
Գլխավոր քարտուղար՝	
Ն. Հարությունյան	Է. Գասպարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.